ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ----------2017թ. N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի հ.648-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Բաղյան փողոցի հ.2 հասցեում գտնվող շինության 1-ին հարկից (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 30.08.2006թ. հ.2184508 վկայական) 133.2 քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով 3 /երեք/ տարի ժամկետով տրամադրել «Լիարժեք կյանք» հասարակական կազմակերպությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Բաղյան փողոցի հ.2 հասցեում գտնվող 133.2 քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով 3 տարի ժամկետով տրամադրել տարածքի փաստացի օգտագործող «Լիարժեք կյանք» հասարակական կազմակերպությանը:

Բաղյան փողոցի հ.2 հասցեում գտնվող տարածքը, համաձայն անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 30.08.2006թ. հ.2184508 վկայականի, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

«Լիարժեք կյանք» բարեգործական հասարակական կազմակերպությունը հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանությունն ապահովող կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1998 թվականին: Կազմակերպության առաքելությունն է՝ նպաստել և խթանել հաշմանդամություն ունեցող երեխաների կարողությունների, ինքնուրույնության, հմտությունների զարգացմանն ու հասարակությունում ներառմանը, անձանց հավասար հնարավորությունների ստեղծմանը և նրանց մասնակցությանը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում՝ կարողությունների զարգացման, շահերի պաշտպանության և հանրության իրազեկման միջոցով: Հիմնադրումից ի վեր կազմակերպությունն իրականացրել է տասնյակ հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության և ծառայությունների մատուցման ծրագրեր: Նշված ծրագրերի շրջանակներում 2010 թվականից գործում է «Ամառային ներառական ճամբար» ծրագիրը, որի շրջանակներում յուրաքանչյուր տարի հաշմանդամություն ունեցող և սոցիալապես անապահով շուրջ 200 և ավելի երեխաներ անցկացնում են իրենց ամառային հանգիստը: «Լիարժեք կյանք» բարեգործական հասարակական կազմակերպությունը 2016 թվականից Երևան քաղաքում մեկնարկել է ծրագիր, որն ուղղված է հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալիզացիային և անկախ կյանքի կայացմանը՝ համայնքային աջակցության կենտրոն ստեղծելու միջոցով, որը նախատեսում է էապես բարելավել հաշմանդամություն ունեցող երեխաներին մատուցվող ծառայությունների որակը:

Քննարկվող տարածքը տևական ժամանակ զբաղեցված է «Լիարժեք կյանք» հասարակական կազմակերպության կողմից, սակայն իրավահաստատող փաստաթղթերի բացակայության պատճառով կազմակերպությունը մինչ օրս չի կարողացել ձևակերպել օգտագործման իրավունքը:

Ելնելով կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների կարևորությունից և անհրաժեշտությունից, ղեկավարվելով 2016 թվականի դեկտեմբերի 21-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2017 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.648-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝ նպատակահարմար է գտնվել բավարարելու «Լիարժեք կյանք» բարեգործական հասարակական կազմակերպության խնդրանքը և վերոնշյալ տարածքի նկատմամբ ձևակերպելու անհատույց օգտագործման իրավունքը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» որոշման ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ